

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ  
ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵԶ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ»  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԶՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ  
ԴՊՐՈՑ՝ «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ N 2  
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Մարտունի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1.ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....5

ԳԼՈՒԽ 2. ՀԱՐՑԱԴՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....18

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում:

**ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ:** Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, աշակերտների ներգրավվածություն, հարցադրումների մեթոդի կիրառումը դպրոցում:

### **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:**

Ուսուցման ինտերակտիվ մեթոդները և հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար, բարձրացնում են աշակերտների ներգրավվածությունը դասապրոցի ժամանակ: Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար:

Հետազոտական աշխատանքի թեմայով պայմանավորված՝ առաջ են գալիս հետևյալ նպատակները.

1. Խթանել հարցադրումների մեթոդի կիրառումը դասապրոցեսի ժամանակ:
2. Ճիշտ և տրամաբանական հարցադրումներով զարգացնել աշակերտների քննադատական և վերլուծական մտածողությունը:
3. Ձևավորել հետաքրքրություն ուսուցանվող առարկայի նկատմամբ:

Հետազոտական աշխատանքի թեմայով պայմանավորված՝ առաջ են գալիս հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել հարցադրումների մեթոդը մանկավարժական պատմության մեջ:
2. Ուսումնասիրել ինտերակտիվ ուսուցման մեթոդները, որոնք ինքըստինքյան կապ ունեն հարցադրումների մեթոդի հետ:
3. Բացահայտել հարցադրումների մեթոդի էությունը:
4. Գնահատել, թե ինչպես է ուսուցման ինտերակտիվ և հարցադրումների մեթոդը օգնում աշակերտներին ներգրավվել դասապրոցեսի ժամանակ:

## ԳԼՈՒԽ 1.

### Ուսուցման ինտեռակտիվ մեթոդները՝ աշակերտների ներգրավվածության գործում

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը<sup>1</sup>:

Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան: Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Խորհուրդ է տրվում օգտագործել գծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում եք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել:

<sup>1</sup> <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf>

Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Մեր գիտելիքների պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից:

Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից: Սրանից կարելի է կարևոր եզրահանգում կատարել՝ որքան շատ գիտելիքներ ունեք, այնքան հեշտ ու շատ կարող եք նոր բաներ սովորել: Եթե կարճաժամկետ հիշողության առանձնահատկությունը սահմանափակ լինելն է, ապա երկարաժամկետ հիշողության առանձնահատկությունն այն է, որ այնտեղ մնում է խորքային առումով լավ հասկացած գիտելիքը: Այսինքն՝ այն ամենը, ինչը մենք մակերեսային ենք հասկացել, մնայուն չէ: Ցավոք, մեր կրթական համակարգը կառուցված է այնպես, որ մենք ավելի շատ մակերեսային բաներ ենք սովորում:

Մեր կրթական համակարգը վազք է կրթական ծրագրի հետևից, ինչի պատճառով աշակերտները չեն հասցնում խորքային գիտելիքներ ձեռք բերել: Այս առումով, որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը:

Վերջին տարիներին շատ մարդիկ փորձում են գիտելիքն ու մտածողությունը հակադրել իրար: Հաճախ ենք լսում արտահայտություններ, որ Google-ն ամեն ինչ գիտի: Հետևաբար՝ մեր խնդիրը գիտելիք ունենալը չէ, այլ մտածողության հմտությունները զարգացնելը: Բայց այդպես չէ: Այսօր էլ հիմնային գիտելիքը ուսուցման հիմքն է: Ոչ մի բժիշկ չի կարող բարդ վիրահատություններ անել առանց հիմնային գիտելիքի: Ոչ մի պատմաբան չի կարող վերլուծություններ անել առանց անուններ և թվականներ հիշելու<sup>2</sup>: Նման տեսակետ արտահայտողները գիտելիքը շփոթում են տեղեկույթի հետ: Google-ն ունի տեղեկույթ: Իսկ գիտելիքն այսօր էլ

<sup>2</sup> <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf>

կարևոր է, քանի որ, ինչպես շատ դիպուկ նշում է ամերիկացի հոգեբան Դանիել Ուիլինգհամը, եթե չկա գիտելիք, ապա ինչի՞ մասին ենք մենք մտածում: Այլ հարց է, որ պարզապես գիտելիք ունենալը բավարար չէ: Բայց առանց գիտելիքի մտածելն էլ վտանգավոր է: Ճիշտ չէ նաև հիշողությունն ու մտածողությունը հակադրելը: Այս մասին էլ Ուիլինգհամը ասել է. «Մենք հիշում ենք այն, ինչի մասին մտածում ենք»: Հետևաբար՝ մտածողությունն ու հիշողությունը ոչ թե հակադիր բաներ են, այլ փոխկապակցված: **Խառը ուսուցում**

Խառը ուսուցումը կապված է ժամանակի մեջ նյութի սփռման հետ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցումն առավել արդյունավետ է, երբ ուսումնական նյութը մատուցվում է խառը: Այսինքն՝ ակնհայտ է, որ խառը ուսուցման դեպքում աշակերտների գիտելիքներն ավելի մնայուն են: Ուսուցման ընթացքում կարևոր է հասկանալ, որ ոչ բոլոր թեմաները կարող են ուսուցանվել խառը մոտեցմամբ:

### **Մանրամասնում**

Ուսուցման արդյունավետ գործիքներից մեկը մանրամասնումն է: Դասավանդողների մոտ սովորաբար առկա է մի երևույթ, որը կոչվում է «գիտելիքի անեծք»: Գիտելիքի անեծքը պայմանավորված է այն հանգամանքով, որ գիտելիք ունեցող ուսուցիչը սովորեցնում է դեռևս գիտելիք չունեցող աշակերտին, այլ կերպ ասած՝ ուսուցման գործընթացում առկա է որոշակի ասիմետրիա: Խնդիրն այն է, որ գիտելիք ունեցողը հաճախ չի պատկերացնում, թե ինչ է տեղի ունենում դեռևս չիմացող աշակերտի հետ: Ի՞նչ է հասկանում, ի՞նչ չի հասկանում, ի՞նչն է դժվարությամբ տրվում: Պատահական չէ, որ հաճախ ուսուցիչները զարմանում են, թե ինչու աշակերտները հասարակ բաները չեն հասկանում: Իրականում այդ ամենը հասարակ է թվում իմացողի տեսանկյունից: Իսկ դեռևս չիմացողի տեսանկյունից կարող է այլ կերպ լինել:

Հետևաբար՝ շատ կարևոր է աշակերտներին նոր բաներ սովորեցնելիս մանրամասնել և անդրադառնալ՝ ինչո՞ւ է այդպես, ինչի՞ց է բխում այդ հետևությունը, որո՞նք են խնդրի բաղկացուցիչները և նմանատիպ այլ հարցերը:

Շատ արդյունավետ հնար է մանրամասնող հետադարձ կապը:

### **Օրինակներով ուսուցում**

Ուսուցման գործընթացում ուսուցիչները հաճախ են օրինակներ օգտագործում, սակայն դրանց հետ կապված կարևոր է իմանալ երկու բան: Առաջին՝ հաճախ ուսուցիչները բավարարվում են մեկ օրինակ բերելով: Շ

Շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա կամ ներառված են խնդրի լուծման որոշ քայլեր: Սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս:

### **Պատկերի և տեքստի համադրում**

Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում մարդիկ ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ, ինֆոգրաֆիկաներ:

### **Մետախմայնություն**

Ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից: Այս երևույթը կոչվում է մետախմայնություն: Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը:

Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Այս ձեռնարկում մենք դասապրոցեսը բաժանում ենք 3 մասի և յուրաքանչյուրի համար առաջարկում մեթոդներ և հնարներ:

1. դասի սկիզբ,
2. 2. նոր նյութի բացատրություն,



### 3. 3. սովորածը պարզելու հնարներ:

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջին հատվածները:

Հաղորդակցման առաջին բոլորներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին բոլորներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

#### **Խորհրդավորություն**

Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են բուլե առաջ բացահայտել գաղտնիքը:

#### **Գուշակություն**

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև:

#### **Չարմանք, անսպասելիություն**

Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է: Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը:

#### **Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՄ)**

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՄ-ը: Դասակարգում ուսուցիչը գծում է M-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո

ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:

### **Մտագրոհ**

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն:

### **Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն**

Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, տասնհինգ վայրկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը: Դասարանին երրորդ մասնակցի պատմածը էականորեն տարբերվում է նրանց տեսածից, որից հետո կազմակերպվում է քննարկում-վերլուծություն: Երեխաները հասկանում են, որ հաղորդակցությունը շատ կարևոր է հասարակական հարաբերություններում: Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը, ոչ ճիշտ հաղորդակցությունը կարող է հանգեցնել հակասությունների:

## ԳԼՈՒԽ 2.

### **Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության Բարձրացումը Բարձրացումը**

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը հիմք է հանդիսանում կրթության որակի բարելավման: Հարցերի կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը: «Քրիստին Չինը իր աշխատություններից մեկում նշում է, որ իրական ուսուցում ապահովելու համար պետք է օգտագործել մարդու միտքը և ոչ թե հիշողությունը: Ըստ նրա՝ դա բացահայտումների փուլ է, որտեղ հիմնական դերում աշակերտն է և ոչ ուսուցիչը»<sup>3</sup>: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է գրավում: Պարզվել է, որ վերջին 15 տարիների ընթացքում ստացված տեղեկությունների համաձայն՝ ուսուցիչները մեծամասամբ տվել են սխալ հարցեր՝ կենտրոնանալով ոչ թե ուսումնառությունն առաջ մղող, այլ սովորողի տիրապետած որոշակի տեղեկությո՞ւյթը վերհանող հարցադրումների վրա:

Հոդվածի նպատակն է ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար:

<sup>3</sup> <https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf>

Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավածության բարձրացման համար քննարկվել են հարցադրման մի քանի ռազմավարություններ:

Հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում: Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա: Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը<sup>4</sup>: Հողվածի նպատակն է ներկայացնել հարցադրումների մի քանի ռազմավարություններ, որոնք կարող են նպաստել դասապրոցեսին աշակերտների ներգրավվածության մեծացմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

### **1.Ամբողջ դասարանին ուղղվող ընդհանուր հարցերի ռազմավարություն**

Սա այն մոտեցումն է, երբ ուսուցիչը հարցն ուղղում է ամբողջ դասարանին: Ամենայն հավանականությամբ, սա ամենատարածված մեթոդներից մեկն է, որի շրջանակում տրվող հարցերը հիմնականում նպատակ ունեն պարզելու նյութի յուրացման մակարդակը կամ պարզել, թե որքանով են աշակերտներն ընկալել ուսուցանվող նյութը: Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ այս հարցերին պատասխանում են հիմնականում դասարանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, մյուսները պարզապես լինում են լսողի դերում: Ավելին, հաստատվեց նաև Գալլի այն տեսակետը, որ որքան ավելի շատ հարցադրումներ են հնչում, այնքան ավելի պակաս աշակերտներ են մասնակցում դասին: Ճիշտ հարցադրման դեպքում այն կարող է հիմնովին փոխել նախնական պատկերը:

### **2.Հարցական բառերի ռազմավարություն**

Այս մեթոդը կիրառվում է, երբ աշակերտներն արդեն ծանոթ են թեմային: Առաջարկվում է աղյուսակ կազմել, որի ձախ կողմում պետք է գրել հարցական բառերի

---

<sup>4</sup> Հովհաննիսյան Հ. և ուրիշներ, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004թ., 157 էջ:

մի ամբողջ շարք, իսկ աջ կողմում՝ թեմային առնչվող հասկացություններ: Այնուհետև օգտագործելով երկու աղյուսակների գրառումները՝ կազմել հնարավորինս շատ հարցեր, քննարկել առաջարկված հարցերից 3-4 հարց, որոնք առավել հետաքրքիր են աշակերտների համար:

Սա այն եզակի ռազմավարություններից է, որի կիրառությունն ապահովում է գրեթե բոլոր աշակերտների ներգրավվածությունը: Այս մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ դասին մասնակցում են գրեթե բոլոր աշակերտները՝ անկախ իրենց առաջադիմությունից: Յուրաքանչյուրը մասնակցում է իր չափով, և այս պարագայում խրախուսվում է ցանկացած հաջողություն, անգամ ամենափոքրը: Ավելին, եթե աշակերտի կողմից տրված պատասխանը այն չէ, ինչ ակնկալվում է, ապա ոչ թե պետք է հարցն ուղղել այլ աշակերտի, այլ պատասխանող աշակերտին օգնել վերաձևակերպել պատասխանը:

Դասերի ընթացքում անհրաժեշտ է կիրառել մոտեցումներ, որոնք օգնում են «ջերմացնել» այսպես կոչված «սառը անվանակոչման» ռազմավարությունը: Ստորև ներկայացնենք դրանցից հիմնականները.

- Նախապես զգուշացրե՛ք աշակերտներին, որ մեծապես խրախուսվում է դասին մասնակցությունը:
- Յուրաքանչյուր աշակերտին տվե՛ք ձևավորող գնահատական:
- Աշակերտներին տվե՛ք ժամանակ, որ նրանք պատրաստեն իրենց հարցերը, ինչպես նաև անդրադարձ կատարեն հետաքրքրող հարցերին:
- Պետք է կարողանալ հմտորեն կառավարել ողջ պրոցեսը և աջակցել աշակերտներին, որ նրանցից յուրաքանչյուրն իր հնարավորության չափով ներգրավվի դասին:
- Օգտագործե՛ք բաց հարցեր և օգնե՛ք աշակերտին հանգել ճիշտ պատասխանի:
- Չափազանց կարևոր է հոգեբանական ապահով միջավայրի ստեղծումը:

#### **4. Վեց W-երի ռազմավարություն**

Ժամանակակից մանկավարժության մեջ մեծ տարածում է գտել այսպես կոչված «Վեց W-երի» ռազմավարությունը:

Ասենք՝ «Ինչո՞ւ սովորեցիր այս թեման», «Ի՞նչ տվեց այն քեզ», «Որտե՞ղ, ե՞րբ, ինչպե՞ս կարող ես կիրառել ստացած գիտելիքները» և այլն: Քննարկվել է խնդիր, որի

լուծման արդյունքում սովորողները ստացած գիտելիքները կիրառել են անձանոթ իրադրությունում:

Հնարավոր է նաև անդրադառնալ միջառարկայական կապերին և հստակ օրինակներով ցույց տալ՝ ինչպես կարող են աշակերտները սովորածը կիրառել այլ առարկաների շրջանակում: Ավելին, աշակերտները սովորում են հարցեր տալու միջոցով կազմել լավ հարցեր և ստանալ հետադարձ կապ՝ աշակերտի կամ ուսուցչի կողմից: Այս ռազմավարությունն օգնում է «իջեցնել օդում կախված ինֆորմացիան» և այն կապել իրական կյանքին, դարձնել ավելի գործնական: Բացի այդ, հարցեր ձևակերպելու նպատակով տարբեր կողմերից խնդրի դիտարկումը հնարավորություն է տալիս նաև երևան հանել թեմայի լավ չյուրացված հարցերն ու գաղափարները:

### 5. Պատասխանին սպասելու ժամանակ

Բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունի սպասելու ժամանակը, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, ինչպես նաև հետագա երկխոսության առաջացման վրա: Սպասելու ժամանակը հարցի և աշակերտի պատասխանի միջև ընկած ժամանակահատվածն է կամ ուսուցչի առաջին և երկրորդ հարցերի միջև ընկած ժամանակահատվածը: Եթե հարցը լսելուց հետո աշակերտները չեն արձագանքում համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ուսուցիչը հաճախ պետք է փորձի առաջ տանել զրույցը՝ կրկնելով, վերաձևակերպելով հարցը կամ դիմելով աշակերտներին: Ավելի բարդ հարցերի դեպքում, որոնք պահանջում են բարդ կոգնիտիվ վերլուծություններ, հնարավոր է անհրաժեշտ լինի տրամադրել աշակերտներին 1-2 րոպե, նախքան պատասխանելը: Միայն է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Արդյունքում աշակերտները զրկվում են հարցը «բռնելու» և իրենց սեփական պատասխանները ձևակերպելու հնարավորությունից, ինչը կարևոր գործընթաց է աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու համար<sup>5</sup>: Անընդհատ պատասխանելով հարցերին աշակերտների փոխարեն, ուսուցիչը անուղղակիորեն «ասում է», որ նորմալ է, որ նրանք չեն պատասխանում հարցերին, քանի որ ուսուցիչը ի վերջո ինքը կպատասխանի: Արդյունքում աշակերտների

<sup>5</sup> <https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf>

սովորելու և դասին մասնակցելու գործընթացը մասնակիորեն դադարեցվում է: Իրականացված հետազոտությունների շրջանակում պարզվել է, որ պատասխանին ավելի երկար սպասելով՝ գրանցում են հետևյալ հաջողությունները.

- Սովորողների պատասխաններն ընդարձակվում են:
- Ամբողջական նախադասություններ և վստահության ավելացում:
- Հայեցողական մտածողության դրսևորում:
- Ավելանում են սովորողի հարցերը և աշակերտների ակտիվությունը:
- Ուսուցիչները վերանայում են սովորողներից ունեցած ակնկալիքները:
- Անցում ուսուցչակենտրոն ուսուցումից սովորող-սովորող վարքի դրսևորումներին և ընդլայնում են հարցերի շրջանակը:

Այսպիսով՝ ուսուցչի սպասման ժամանակի ավելացումն ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որը նպաստավոր է մտածողության բարձր մակարդակներով արդյունավետ հարցերի համար: Սովորողները ևս օգտագործում են սպասման ժամանակն ավելի ամբողջական պատասխաններ ձևակերպելու համար:

#### **Հարցերի շղթայի մեթոդ**

Լինում են դեպքեր, երբ բարդ հարցերը տեղին չեն՝ առանց նախապես ամրապնդելու գիտելիքային հիմքը: Օրինակ՝ ներածական դասընթացում ավելի պարզ հարցեր են պահանջվում: Ինտեգրատիվ դասընթացների ընթացքում ուսուցիչը արագորեն պետք է անցնի ավելի բարդ հարցերի, ավելի պարզ հարցեր տալուց հետո՝ ուղղված նախնական գիտելիքների պաշար ձևավորելու համար: Հարցերի ցանկը պետք է տարբերվի՝ կախված դասընթացի բովանդակությունից և նպատակներից:

Հարցերի շղթայի մեթոդը աշակերտներին մակերեսային պատասխաններից տանում է դեպի խորը քննարկումներ: Ավելին, աշակերտների կողմից հարցերին տրված պատասխանները, անկախ այն բանից, թե դրանք որ մակարդակի հարցեր են, վկայում են այն մասին, որ աշակերտները հստակ ըմբռնել են հարցը և գիտեն, թե խոսքը կոնկրետ ինչի մասին է: Այսպիսով, չափից շատ հարցերի օգտագործումը կարող է հանգեցնել բացասական արդյունքների և աշակերտների պասիվության: Դա կարող է հանգեցնել աշակերտներին չմասնակցելու քննարկումներին, այն կարող է առաջացնել վախի և հարցաքննության զգացողություն:

Այսպիսով, բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունեցող տեխնիկաներից մեկը սպասելու ժամանակն է, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, և հետագա երկխոսության առաջացման վրա: Միսալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Արդյունքում աշակերտները զրկվում են հարցը «բռնելու» և իրենց սեփական պատասխանները ձևակերպելու հնարավորությունից, ինչը կարևոր գործընթաց է աշակերտների ներգրավվածությունը բարձրացնելու համար: Եվ այսպես հարցադրումների մեթոդը ուսուցման հզոր ռազմավարություն է: Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունները ուսումնառության մեջ առանցքային դեր ունեն: Ճիշտ և ժամանակին կատարված հարցադրումները շարժում են սովորողի հետաքրքրությունը, խթանում քննադատական մտածողությունը, մղում վերլուծական անդրադարձի, օգնում սովորողներին յուրովի իմաստավորել ուսումնասիրվող գաղափարները, համադրել սովորածը և կատարել ընդհանրացումներ:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր կատարած աշխատանքի ավարտին **եզրահանգում ենք**.

1. Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար:
2. Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը և արդիականացումը հիմք է հանդիսանում կրթության որակի բարելավման:
3. Հարցերի կիրառությունը դասավանդման գործընթացում ամենահզոր գործիքներից մեկն է, և դրանց ճիշտ կիրառությունը զգալիորեն կարող է բարձրացնել ուսուցման որակը և ավելացնել սովորողների ներգրավվածության մակարդակը:
4. Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար
5. Հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում:
6. Հարցադրումների կիրառմամբ կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը:
7. Հարցադրումների մեթոդը կարող է բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա:
8. Հարցերի շղթայի մեթոդը աշակերտներին մակերեսային պատասխաններից տանում է դեպի խորը քննարկումներ:
9. Աշակերտների կողմից հարցերին տրված պատասխանները, անկախ այն բանից, թե դրանք որ մակարդակի հարցեր են, վկայում են այն մասին, որ աշակերտները հստակ ըմբռնել են հարցը և գիտեն, թե խոսքը կոնկրետ ինչի մասին է:
10. Ճիշտ և ժամանակին կատարված հարցադրումները շարժում են սովորողի հետաքրքրությունը, խթանում քննադատական մտածողությունը, մղում վերլուծական անդրադարձի, օգնում սովորողներին յուրովի իմաստավորել

ուսումնասիրվող գաղափարները, համադրել սովորածը և կատարել ընդհանրացումներ:

#### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. Հովհաննիսյան Հ. և ուրիշներ, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004թ., 157 էջ:
2. <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf>
3. <https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf>